ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-666[1]-25.09.2023-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	1) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) լրիվ անվանումն անհրաժեշտ է շտկել. մասնավորապես «Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մարտի 3-ի» բառերն ավելորդ են, քանզի Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է հղում կատարել	**1)** Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է:

			ոչ թե Նախագծի այլ Օրենքի լրիվ անվանմանը: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս ապահովել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»: 2) Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում նշված «2-րդ հոդվածի 1-ին մասում» բառերը փոխարինել «2-րդ հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացվող նոր 246.1-ին հոդվածի 1-ին մասում» բառերով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենքի 2-րդ հոդվածը չունի 1-ին մաս եւ համապատասխան հոդվածները շարադրված են Օրենքի 2-րդ հոդվածով լրացվող նոր 246.1-ին հոդվածի 1-ին մասում:	**2) Ընդունվել է:** Նախագծի 1-ին հոդվածում նշված «2-րդ հոդվածի 1-ին մասում» բառերը փոխարինվել են «2-րդ հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացվող նոր 246.1-ին հոդվածի 1-ին մասում» բառերով:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	Նախագծի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը», ինչից բխում է, որ Նախագծով սահմանված բոլոր	**Ընդունվել է:** Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանվել է 2024	Ընդունվել է:

			կարգավորումների ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանված է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Նախագծի 2-րդ հոդվածով՝ Օրենքի ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը փոփոխվում է՝ սահմանելով 2023 թվականի դեկտեմբերի 1-ը: Նշված դրույթների միաժամանակյա առկայության պարագայում ստացվում է, որ Նախագծի 2-րդ եւ 3-րդ հոդվածների ուժով՝ Օրենքի՝ 2023 թվականի դեկտեմբերի 1-ին ուժի մեջ մտնելու ժամկետը գործելու է Նախագծի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, ինչը կարող է 2023 թվականի դեկտեմբերի 1-ից ավելի ուշ ժամկետում տեղի ունենալ: Տվյալ պարագայում, եթե Նախագիծն ուժի մեջ մտնի 2023 թվականի դեկտեմբերի 1-ից հետո Օրենքի ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը կարող է խնդրահարույց լինել, քանի որ ժամկետների չհամապատասխանելու արդյունքում Օրենքը չի կարող հետադարձության կարգով ուժի մեջ մտնել: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծի եւ Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետները սահմանելիս հաշվի առնել օրենքների ընդունման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետները:	թվականի փետրվարի 1-ը:	
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ	Ընդունվել է:

			մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի համաձայն սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Միաժամանակ, Նախագծի 3-րդ հոդվածի համաձայն սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք վերոնշյալ նախագծերի ուժի մեջ մտնելու վերաբերյալ դրույթները համապատասխանեցնել:	հոդվածը խմբագրվել է և նախատեսվել է, որ օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից	